Ծ Ր Ա Գ Ի Ր
Պարտապան՝ ԱՁ ՎԱՐԴՈՒՀԻ ՆՇԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ գույքի վաճառքի

ՀՀ սնանկության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 03.02.2025թ. թիվ ՍՆԴ/0026/04/25 վճռով ԱՁ Վարդուհի Նշանի Կարապետյանը (պետական գրանցման համար՝ 99.1153172, ՀՎՀՀ՝ 49719627, հասցե՝ ՀՀ, Արմավիր, Ջրառատ, Հ. Մկրտչյան փ. 1), այսուհետ նաև՝ Պարտապան, ճանաչվել է սնանկ: Դատարանի 11.02.2025թ. որոշմամբ ես՝ Ալբերտ Կարապետյանս, նշանակվել եմ Պարտապանի սնանկության գործով կառավարիչ:

Սնանկության գործի շրջանակներում գույքագրվել է Պարտապանի սեփականությունը հանդիսացող հետևյալ անշարժ գույքը (այսուհետ՝ Հողամաս).

- Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գ. Ջրառատում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամաս (սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 0260192, կադաստրային ծածկագիր՝ 04-085-0254-0010):

Հողամասի նկարագրությունը

Հողամասը գտնվում է Արմավիրի մարզի Ջրառատ գյուղում, զբաղեցնում է 1900 քմ մակերես, ունի ուղղանկյունաձև տեսք: Հողամասը ռռոգելի է, հարթ է, Հողամաս տանող ճանապարհը գրունտային է, գտնվում է միջին վիճակում:

Համաձայն «Այ Էքսպերտ» ՍՊ ընկերության 23.03.2026թ-ի գնահատման հաշվետվության՝ Հողամասի շուկայական արժեքը կազմում է 660,000 (վեց հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

Հողամասի վաճառքը նախատեսվում է իրականացնել «Սնանկության մասին» օրենքի 75-րդ հոդվածի համաձայն՝ հրապարակային սակարկություններով:

ԱՁ Վարդուհի Նշանի Կարապետյանի
սնանկության գործով կառավարիչ՝ Ա. Կարապետյան